



RICHARD FIGUEROA
ACTING DIRECTOR

State of California—Health and Human Services Agency
Department of Health Care Services



GAVIN NEWSOM
GOVERNOR

Կարևոր նորություն Ձեր առողջության ապահովագրության վերաբերյալ

Հարգելի նպաստառու

Մենք լավ լուր ունենք Ձեզ համար: California- ի նոր օրենքի համաձայն՝ «Medi-Cal»- ի Ձեր սահմանափակ նպաստները կարող են փոխվել «Medi-Cal»- ի լիարժեք նպաստների:

Ի՞նչ է իրենից ներկայացնում նոր օրենքը

California- ի նոր օրենքը **2020 թ. հունվարի 1- ից** լիարժեք «Medi-Cal» է տրամադրելու մինչև 26 տարեկան երիտասարդ չափահասներին: Նշանակություն չունի, թե Դուք ներգաղթողի ինչ կարգավիճակ ունեք: Բայց Դուք պետք է բավարարեք «Medi-Cal»- ի մնացած բոլոր պահանջները:

Ի՞նչ է լիարժեք «Medi-Cal»- ը

«Medi-Cal»- ն անվճար կամ ցածր գներով առողջության ապահովագրություն է տրամադրում California- ի որոշ բնակիչների: Լիարժեք «Medi-Cal»- ը ոչ միայն շտապ բուժօգնության համար է վճարում: Այն բժշկական, ատամնաբուժական, հոգեբուժական և ակնաբուժական օգնություն է տրամադրում: Բացի այդ, լիարժեք «Medi-Cal»- ը վճարում է ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից տրամադրվող բուժման, Ձեր բժշկի պատվիրած դեղերի համար և ավելին: Այն կարող է փոխադրամիջոց տրամադրել բժշկի կամ ատամնաբույժի այցելությունների և Ձեր դեղերը ստանալու համար: «Medi-Cal»- ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս նամակի հետ ուղարկված «Հաճախակի տրվող հարցերը» (FAQs):

Լիարժեք «Medi-Cal»- ը տարբերվում է սահմանափակ «Medi-Cal»- ից, որից այժմ Դուք օգտվում եք: Սահմանափակ «Medi-Cal»- ը վճարում է որոշ ծառայությունների համար, բայց չի վճարում այնպիսի բաների համար, ինչպիսիք են դեղերը կամ նախնական բուժօգնությունը: Եթե Դուք հղիության հետ կապված սահմանափակ «Medi-Cal» ունեք, ապա ստանում եք «Medi-Cal»- ի ապահովագրական ծածկույթի

մեջ մտնող բոլոր ծառայությունները, եթե դրանք բժշկական առումով անհրաժեշտ են:

Ինչպե՞ս եմ ես առողջապահական ծառայություններ ստանալու

Լիարժեք «Medi-Cal»- ում ընդգրկվելու դեպքում՝ Դուք Ձեզ անհրաժեշտ առողջապահական ծառայությունների մեծ մասը կստանաք «Medi-Cal»- ի որևէ առողջապահական ծրագրի միջոցով: «Medi-Cal»- ի առողջապահական ծրագիրն առողջության ապահովագրության ծրագիր է, որը վճարում է «Medi-Cal»- ի ծառայությունների համար: Յուրաքանչյուր ծրագիր իր առանձին սպասարկողներն ունի: Դուք ընտրում եք «Medi-Cal»- ի ցանկացած ծրագիր, որը սպասարկում է Ձեր բնակության շրջանը: Իմանալու համար, թե Դուք «Medi-Cal»- ի ինչ առողջապահական ծրագրեր կարող եք ընտրել, այցելեք <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov/>:

Սահմանափակ «Medi-Cal»- ի դեպքում, որից այժմ Դուք օգտվում եք, Դուք պետք է «Medi-Cal»- ի «Benefits Identification Card» (BIC) ունենաք: BIC- ը պլաստիկ քարտ է: Այն լինում է կա՛մ կակաչի պատկերով, կա՛մ կապույտ ու սպիտակ ձևավորմամբ: Երբ Դուք բուժօգնություն ստանալու նպատակով այցելություն եք կատարում, բժիշկը կամ կլինիկան պետք է տեսնեն Ձեր BIC- ը: Բժշկին կամ ատամնաբույժին այցելելիս միշտ Ձեզ հետ վերցրեք Ձեր BIC- ը: Լիարժեք «Medi-Cal»- ում ընդգրկվելուց հետո Դուք կշարունակեք օգտվել Ձեր BIC- ից: Եթե Ձեզ նոր BIC է անհրաժեշտ, խնդրում ենք զանգահարել Ձեր շրջանային գրասենյակ, որպեսզի նրանք Ձեզ նոր քարտ տան:

«Medi-Cal»- ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելուց հետո Դուք նաև առողջապահական ծրագրի քարտ կստանաք «Medi-Cal»- ի Ձեր նոր ծրագրից: Ձեր բժշկին, ատամնաբույժին կամ բժշկական ծառայությունների որևէ այլ սպասարկողի այցելելիս միշտ ցույց տվեք ինչպես Ձեր BIC- ը, այնպես էլ Ձեր առողջապահական ծրագրի քարտը:

Ես ինչպե՞ս իմանամ, թե արդյոք ինձ հասնում է ամբողջական «Medi-Cal»

Դուք փոստով նամակ կստանաք, որում նշված կլինի, որ Դուք կարող եք «Medi-Cal»- ի լիարժեք նպաստներ ստանալ:

Ես պե՞տք է այժմ որևէ բան անեմ

Ոչ: «Medi-Cal»- ի Ձեր նպաստներն այս պահին դեռ չեն փոխվում, ուստի հարկավոր չէ որևէ բան անել: Քանի որ Դուք արդեն սահմանափակ «Medi-Cal» ունեք, «Medi-Cal»- ի նոր դիմում լրացնելու անհրաժեշտություն **չկա**: Բայց եթե Դուք փոստով «Medi-Cal»- ը քարմացնելու փաթեթ ստանաք, հարկավոր է լրացնել այն:

Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ

Երիտասարդ չափահասների համար տրամադրվող «Medi-Cal»- ի մասին ավելին իմանալու կամ օգնություն ստանալու համար՝

- Զանգահարեք «Medi-Cal»- ի օգնության հեռախոսագծով՝ 1-800-541-5555 հեռախոսահամարով: Զանգն անվճար է:
- Այցելեք «Department of Health Care Services»- ի կայքը՝ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/eligibility/Pages/YoungAdultExp.aspx> հասցեով:

Ներգաղթի մասին հարցերով, այդ թվում՝ «Medi-Cal» ծրագրի հետ կապված՝

«California Department of Social Services»- ը (CDSS) վճարում է համապատասխան որակավորում ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների, որպեսզի վերջիններս ծառայություններ տրամադրեն California նահանգում բնակվող ներգաղթողներին: Այդ սպասարկողների ցուցակին կարելի է ծանոթանալ CDSS- ի կայքում, այցելելով՝ <https://www.cdss.ca.gov/Benefits-Services/More-Services/Immigration-Services/Immigration-Services-Contractors>:

Ներգաղթի մասին լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների համար խնդրում ենք այցելել California- ի ներգաղթողի ուղեցույցի կայքը՝ <https://immigrantguide.ca.gov/> հասցեով:

Շնորհակալություն,

Department of Health Care Services